



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՄԵՋ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇՆԱՍԿՈՒՄ

Հաւատարիմ մնալով վերջին տարիներու իր աւանդութեան, Լոս Անճելլոսի քաղաքապետութիւնը յատուկ հանդիսութեամբ մը ոգեկոչեց յիշատակը հայկական Ցեղասպանութեան:

Քաղաքապետական խորհուրդի անդամներ Էրիք Կարսեթիի եւ Փօլ Գրիգորեանի նախաձեռնութեամբ, Չորեքշաբթի, 20 Ապրիլի առաւօտուն, քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ յիշատակի արարողութիւն մը, որուն հրաւիրուած էին հայ համայնքի ներկայացուցիչներ: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի իբրեւ ներկայացուցիչ, արարողութեան ներկայ եղաւ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, ընկերակցութեամբ Արժ. Տ. Վիգէն Ա. Քիւյ. Վասիլեանի եւ Արժ. Տ. Նարեկ Ա. Քիւյ. Փեղիվանեանի: Ներկայ էին Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայ Դատի եւ հայկական այլ միաւորներու ներկայացուցիչներ:

Հանդիպումը սկսաւ պաշտօնական ընդունելութեամբ մը եւ հաւաքական աղօթքով: Պատրաստուած էր կարճ յայտագիր մը, որուն ընթացքին, քաղաքապետական խորհուրդը պատուեց միջազգային ճանաչում գտած պատմաբան Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանը, առ ի գնահատանք՝ Ցեղասպանութեան ուսումնասիրութեան եւ հայութեան իրաւունքներուն ճանաչման նպատակով բազմատասնեակ տարիներու իր աշխատանքին ու իրագործումներուն:

Կարճ դադարէ մը ետք, քաղաքապետական խորհուրդը գումարեց Ցեղասպանութեան 96ամեակին նուիրուած յատուկ նիստ մը, որուն ընթացքին, ժողովը անգամ մը եւս պատուեց Փրոֆ. Յովհաննէսեանը եւ իրեն յանձնեց Ցեղասպանութեան մասին իր հռչակագիրէն օրինակ մը:

Եւ շէնք որ պաշտօնական ընդունելութեան բաժնին փակման աղօթքը կատարեց Հայր Միւռն. ան առաջին հերթին գոհութիւն տուաւ Աստուծոյ, որ առիթը ընծայած է հաւաքաբար յիշատակելու Ցեղասպանութեան զոհերը, եւ այս գծով ողջունեց քաղաքապետական խորհուրդը՝ անոր հետեւողական զօրակցութեան համար: Հայր Միւռն նաեւ դրուատիքով անդրադարձաւ Փրոֆ. Ռ. Յովհաննէսեանի երախտիքին, ու աղօթք բարձրացուց առ Աստուած, որպէսզի խաղաղութեամբ պահպանէ բոլորը, իսկ հայութեան նահատակներուն շնորհէ յաւերժական խաղաղութիւն:

L.A. CITY COUNCIL GENOCIDE COMMEMORATION

On Wednesday, April 20th, 2011 the 96th anniversary of the Armenian Genocide was commemorated by the Los Angeles City Council at City Hall. The annual commemoration was hosted by Council President Eric Garcetti and Councilmember Paul Krekorian.

Very Rev. Fr. Muron Aznikian represented H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, accompanied by Archpriest Fathers Vicken Vassilian and Nareg Pehlivanian. H.E. Archbishop Vatche Hovsepian and ANC-WR representatives were in attendance.

The day began with a collective prayer and a reception during which Prof. Richard Hovannisian was honored. Members of Prof. Hovannisian's family were present for the ceremony.

After a short break, a special session dedicated to the 96th anniversary of the Armenian Genocide followed in the Council Chambers, during which Prof. Hovannisian was once again honored and presented with the City Council resolution in recognition of the Armenian Genocide.

The morning reception closed with the benediction by Fr. Muron, who first thanked God for granting the opportunity to collectively commemorate the Armenian Genocide with the City Council, and saluted the Council members for their support and friendship. He lauded Prof. Hovannisian for his invaluable contributions to the field of Armenian Studies, and concluded by praying for the Lord to protect and keep us all in peace, and for the souls of our martyrs to rest in peace.